

ՀԱՅ

ՄՎԱՌՈՒՏ



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Բ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des
SCOUTS ARMÉNIENS

ՀԱՍՅԷ - Խորասանձեան Խան, Թիւ 26, Սիրէճի և Պոլիս
ADRESSE - Khorassandjian Han, 26, SirKédji Constantinople

Հեռանայն Ար. 2146

ԲԱԺՆԵԳԻՆ

Telephone St. 2146

Բ. ՏԱՐԻԹ ԻԻ 22

Պոլիս և Գալատ Տրկե, Պր. 120

Արսասանման . Տր 15

Ամերիկա . Տր 150

16-30 ՅՈՒՆԻՍ 1922



Երբ ուրիշներ քաղաքենի
Հաճոյքներով կեանք կը մաշեն,

Սկառուները բնութեան մէջ
կեանք կը շահին ուրախ
զուարթ,



Նկարուած նայնիմեց իրենց կողմ:

ՍԿԱՌԻՏՆԵՐ ՊԷՏՔ ԵՆ ՄԵԶԻ

Անդրկովկասի հայ մտաւորականութեան մեծագոյն մասը սուսական դպրոցէ անցած մարդոց թիւին կը պատկանին և այդ հանգամանքը միաժամանակ անոնց թէ դրական և թէ բացասական կողմերու ազբիւրը կը հանդիսանանայ :

Մտքի խիզախ թռիչքն ու ըմբոստ, սրնող ոգին, պայքարի ու անձնազոհութեան անսահման ձգտումը, չաղկապուած լայն ժողովրդասիրութեան, ահա այն լաւագոյն յատկութիւնները, որ սուսահայ մտաւորականը ժառանգած է, սուսական քաղաքակրթութիւնէն՝ հակառակ ցարիզմի բոլոր քանքերուն :

Բայց անոր զուգընթաց ան կորսնցուցած է իր կազմակերպուած կուռ կամքը և սխտեմարիք, մտածած աշխատանք վարելու կարողութիւնը : Անոր աշխատունակութիւնն ու կորովը շատ շատ աւելի ետ մնացած է անոր մտքի թռիչքներէն :

Առաջին հայեացքէն գուցէ և առեղծուածային թուի մեր այն համոզմունքը, որ հայ մտաւորականը աւելի ընդունակ է որդեգրելու ու իւրացնելու համամարդկային գաղափարներ ու սկզբունքները, քան նոյն մակարդակի վերայ գտնուող եւրոպային :

Փաստօրէն, այդ բանին շատերը արդէն առիթ ունեցած են համոզուելու, մենք, «բիրտ ապիպի» անունով օժտւածներս, շատ աւելի հանրային փոխյարարութիւններու մէջ ենք քան ազատամիտ ու քաղաքակրթ եւրոպային : Բայց եթէ այնուամենայնիւ մենք յետամնաց ենք ու կարօտ ուսանելու՝ անոր պատճառը մեր անկազմակերպ կամքն է : Մինչև այժմ՝ իսկ բազմաթիւ հայազգի, վրացի, թաթար, քաղաքացիներ հեռաւոր Ամերիկայի, Հունգարիայի, Ֆրանսայի և այլուր հանդէս կուգան իրրեւ հանճարեղ գիտնականներ, երաժիշտներ ու քաղաքագէտներ, բայց անմիջապէս որ անոնցմէ մէկն ու մէկը կ'ընայ մեր միջավայրը՝ իսկոյն տեսակ մը տերեւածափ, ուժասպառ կըլլայ, «սովորական մարդ» կը դառնայ, ոմանց նոյն իսկ յուսախար կ'ընէ . . .

Այս տարօրինակ երեւոյթին պատճառը հասկնալ դժւար է . մենք ոչ միայն ընդունակ չենք աշխատելու, այլև աշխատեցնելու : Բանաստեղծը՝ քաղաքագէտ կը դառնանք բժիշկը՝ անտեսագէտ, գիւղատնտեսը՝ վաճառական՝ և

այդ բոլորէն յետոյ կը դարձանանք, թէ ինչո՞ւ հանճարեղ բանաստեղծ համարուող Ն. Բ կամ յայտնի բժիշկ Մ. Բ այդքան անճարակ գործիչներ դուրս եկան . . . Կարճ ըսելով մեզ անհրաժեշտ է ֆրանսական կենսութեան ու դիւրաշարժութեան հետ միասին իւրացնել գերմանացիի տոկոթիւնը և անգլիական խեղճութիւնը :

Պիտի դաստիարակենք մեր կամքն ու հոգին, եւ այն պիտի կատարենք լայն չափերով :

Անշուշտ դպրոցը շատ բան ունի այդ աս. պարէզի մէջ, բայց սա՛ իր ճիրաններուն մէջ աւանելով մանուկին ուղիղը՝ կ'ըրազի է միայն անով ստեղծելով տեսակ մը մտաւոր շերերուկներ, տեսեսելով անոր ֆիզիքական ու հոգեկան պահանջները : Սկաուտիզմը հոգեկանի ու ֆիզիքականի, մտաւորի ու բարոյականի անաղմուկ ժամադրութիւնն է : Ան չունի փիլիսոփայական հիմնաւորում, գիտական լուսարանութիւն և ճիշդ այդ պատճառով դիւրամարտելի է թէ պատանիի, և թէ ծնողքի համար :

Ուրեմն նպաստենք անոր ծաւալմանը : Թող իւրաքանչիւր ընտանիքի զաւակ ըլլայ միաժամանակ հանրութեան համար սկաուտ, ընդունակ եւ բարձրանալու եւ ուրիշին բարձրացնելու :

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Բ Ա Ր Ի Գ Ո Ր Ծ

Սկաուտ եղբայրներու

Կը սիրեմ Սկաուտիլմը, կը սիրեմ ձեր վեհ նշանաբանը, կը սիրեմ ձեր հանգուստը, և սակայն չափազանձ պիտի սիրեմ ձեր սիրտն ու հոգին երբ անոնք կը մարմնացնեն բարի գործեր :

Ձեր բարձր խնայելի հիմնադիրը, մեծերու և փոքրերու հրաշալի վարիչը, Պէտրն Բաուրլ, իր սկաուտներէն կը պահանջէ ասօրեայ դիւցողնութիւն : Նա իր այդ պահանջքով, առանց թերեւս գիտնալու կը համաձայնի մեծ բարոյախօսներու և հոգեբաններու հետ : Եթէ կը փոփաքիք, ձեր բարոյական կեանքին մէջ ներդաշնակութիւն և միութիւն ստեղծել, ձեր զգացումներն ու մտածումները ձեր գործելակերպէն չբաժնել, անհրաժեշտ է իրագործել լաւ գաղափարներ, գեղեցիկ թելադրութիւններ, նմանասիրութեան գործեր, և այլն :

Պէտրն Բաուրլ կը պահանջէ բարի զգացումներու և բարի գործերու լաւագոյնը որ դիւցողնութիւն կը կոչուի : Դիւցազնութիւնը ճշգրիտ բառ մըն է արտայայտելու սկաուտիզ

ամբողջութիւնը : Ձեր առօրեայ կեանքին մէջ իրականացուած բարի գործերը հետզհետէ ձեզ դիւցազնութեան կը մղեն և անոր ամուր հիմերը կը զեռեղեն ձեր նկարագրին ու ձեր գործերուն մէջ :

Մարդկային կեանքի մէջ հերոսական ու է գործ անակնկալօրէն չ'ծնիր, աստիճանաբար կատարուած լաւ գործերու արդիւնքն է որոնց հիմը զոհարերութիւնն է : Մարդկային զոհարերութիւնը, որքան ալ փոքր լինի, դիւցազնութեան սկիզբն է : Ասէն օր առիթը չէք ունենար ազատել ձեր ընկերը ու է վտանգէ կամ հրդեհի փութալ, բայց ամէն օր, առիթը պիտի ներկայանայ սրպէսզի չափաւորէք ձեր կոստիւմիւնը, ուրիշներու տրամադրելով ձեր ժամանակէն, ձեր ուժէն ձեր մտային կարողութիւններէն և ազնիւ զգացումներէն մաս մը : Եթէ արկած մը, վտանգ մը կամ թշուառութիւն մը ձեզ պարտադրէ մեծ զոհարերութիւն կամ ձեր լաւագոյն զգացումներու իրագործումը, դուք պարտաւոր էք տրամադրել ձեր մարմինն ու հոգին և ընել ամէն տեսակ զոհողութիւն՝ քանի որ առօրեայ կեանքի մէջ չէք մերժած այդ կարգի պահանջները :

Երբ, սկառու մը հանդիստ կը քնանայ երազելով միմիայն իր պարտականութեան բարձր մասը ըրած գործերը, կ'ապացուցանէ թէ նուրբ խիղճ չ'ունի, թէ լաւ չէ ըմբռնած սկառուիդ մի իսկական օրէնքը : Այդ օրէնքը ճշգրիտ պարտականութիւններու վրայ բարոյական ազդեցութեան յաւելումը և քիչ մըն ալ բարութիւն կը պարտադրէ : Անա ատիկա, զօրաւոր ջանք մըն է դէպի կատարելագործում, դէպի դիւցազնութեան պատրաստութիւն : Կեանքը ծաղկանոց մըն է, այդ ծաղկածաղկանոցին մէջ էն հաղբազիւտ, էն ճոխ և ամէնէն աւելի հրապոյրով մշակուած ծաղիկը դիւցազնութիւնն է :

Անհրաժեշտ է միթէ, ամէն օր երկար մըտածել, գտնելու համար այդ փոքր, բայց սիրուն բարոյական ծաղիկը : Անշուշտ ոչ : Կարելի է արդեօք ընթանել ձեր յուսահատ ջանքերը, որով, յաճախ ու է գործ ձեր կարողութիւնէն շատ վեր կը նկատէք և զայն դժուարին կը գտնէք, բարի ու ազնիւ գործերը միշտ ձեր շուրջ կը թափառին և կարելի է զանոնք դիւրութեամբ իրագործել : Երբ ընտանեկան յարկի մէջ հիւանդ մը կը խնամէք, ձեր մօտ առտնին զրազումներուն կ'օժտնդակեք, ձեր տան ծառային, վաճառատան պաշ-

տօնեային կամ գործաւորին հանդէպ բարեացակամ կ'ըլլաք, հիւանդի մը կ'այցելէք, կարգապահ ու մաքրասէր կ'ըլլաք, պճնասիրութեան և որկրամոլութեան չ'էք մղուիր, բարի գործեր կը կատարէք :

Ձեր դպրոցական կեանքի մէջ ալ, բարի գործեր ընելու առիթներ չեն պակսիր : Այդ բարի գործերը միշտ դէպի ուրիշը ուղղուած են, որով ձեր մէջ կը ծնցնին, բարութիւն և ազարութիւն երկու էական առաքինութիւններ : Սկառուներ, ձեր այդ կեանքին մէջ կը ջանաք պաշտպանել ձեր ընկերները անբարոյականութեան վտանգներուն դէմ : Գաշտային պտոյտներու և արշաւներու ժամանակ կ'օգնէք ձեր յոգնած ընկերոջ, ձեր խնամքն ու հոգածութիւնը կը հասնի մինչև կենդանիներն ու բոյսերը : Ձեզ մէ՛ ռմանք ինքնարեւար կ'օտանձնեն կենդանիներու և բոյսերու պաշտպանութիւնը անխիղճ ու չար մարդոց չարչարանքներուն դէմ, երբեմն կը ջանաք ձեր մէկ ընկերը զգուշացնելու խօսակցութենէ, և վտանգաւոր թելադրութիւններէ հեռու պահել : Ուրիշ առիթ կ'օժտանդակէք կամքով տկարներուն, որպէսզի անոնք ծխելէ և ոգելից ըմպելիքներու գործածութենէն զերծ մնան : Այս բոլորը ամէնքն ալ բարի գործեր են որոնք դուք ամէն օր կրնաք կատարել :

Երբ երեկոյեան դուք մտածէք ձեր բարի գործերուն վրայ, անոնց պատճառները փնտռէք ու արդիւնքը գնահատէք, վտանգ եղէք որ ձեր մէջ հետզհետէ պիտի զարգանայ ընկերասիրութիւնը, զոհարերութեան ոգին, ինչ որ ձեր շատերուն քով կը պակսի : Դուք դիւրութեամբ պիտի ըմբռնէք թէ ձեր ու է չ'հաճոյքէ զրկուիլը, մեծապէս կը նպաստէ ուրիշներու յառաջդիմութեան և բարոյական զարգացման : Դուք հետզհետէ պիտի սիրէք զոհարերութիւնը որ ընտանեկան և հայրենասիրական առաքինութիւններու լաւագոյնն է :

Սկառուներ, միշտ յիշեցէք թէ ձեր առօրեայ բարի գործունէութիւնը, էական պարտականութիւն մըն է : Մենք ձեր մեծ եղբայրները կը ջանանք ու միշտ պիտի ջանանք ձեր ջանքերը զօրացնել, ձեր նկարագիրը ազնուացնել և հետզհետէ ձեզ մօտեցնել իտէալ կեանքին :

Գում գարու
Պ. ՇԱՊՈՅԵԱՆ



Լաւառես կեանք

ԶՈՒԱՐՔՈՒՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԷՋ

«Երբեմն ժպտէ ու սիրտդ պիտի թեթեւնայ : կեանքը հայելի մ'է . եթէ ժպտինք , ժպտաները մեզ կը վերադառնան . եթէ միշտ մեր դէմքը կնճռոտենք՝ միշտ կնճռոտներու պիտի հանդիպինք» :

Գօնէք թիքըդի մէջ մարդիկ կը վիճարանէին թէ ինչպէս կ'ուզէին մեռնիլ : Շատ մը առաջարկներէ վերջ Չաք անունով մէկը բաւ . «կը նախընտրեմ տեսնել ձեռքերի բան մը ու խնդալ մինչեւ որ մեռնիմ» :

Երբ օրաթերթի մը խմբագրին հարցուցին թէ ինչու համար յիսուն տարեկանէն վեր պաշտօնեայ չէր ուզեր ընդունիլ , բաւ . «Ոչ թէ



Գատրգիւղի Ակառանքերէն

գործը լաւ չընէր , այլ շատ լրջօրէն կը խորհի» :

Հին Գերմանիոյ մէջ կատակի մասին օրէնք մը կար : Թագաւորը կ'ըսէր թէ «Մարդոց՝ պատերազմը մոռցնել կուտայ» :

Կարծես թէ մեր քաղաքներուն մէջ ալ խնդալու դէմ օրէնք մը կայ : Ինչ տխուր բան է փողոցներէ անցնող տղոց դէմքերուն վրայ նըշմարել տխուր , մտահոգ ակնարկներ : Ուրախութիւնը իրենց փոքր կեանքերէն վտարուած է :

Եթէ փորձենք քննել կարգ մը դիմագիծեր , պիտի զարմանանք տեսնելով անոնց լրջութիւնը : Նոյն իսկ պանդակներու մէջ մարդիկ կեանքի լուրջ կողմը չեն մոռնար : Երեսներն կախ կը ճաշեն : Անոնք կը խորհին , կը ծրագրեն : Ամենահզօր տօլարը լուրջ նիւթ մ'է որ խնդալը կ'արգիլէ :

Սակայն յոռեաւոր առեւտուր ու նոր գործ կը վարէ : Միւս կողմէն զուարթ մարդը կը

հրաւիրէ զայն : Լաւատեսութեան մեջ ձգողական մեծ ոյժ մը կայ :

Լաւառես մարդը յաջողութիւն կը տեսնէ հոն՝ ուր ուրիշներ ճախողութիւն կը տեսնեն , լոյս կը տեսնէ հոն՝ ուր որ ուրիշներ շուք ու փոթորիկ կը նշմարեն :

Եթէ մանուկը դատարարակուռի այն դադափարով թէ , կեանքի գլխաւոր բանն է ամէն պարագայի օրախ ըլլալ , շուտով մեր քաղաքակրթութիւնը պիտի յեղաշրջուի :

Շատ մարդիկ երբեք չեն սորված սրտագին խնդալ : Միայն կէս մը կրնան խնդալ : Եթէ տղաք քիչ մը շատ ազմուկ հանեն լուրջութիւն կը պահանջուի , իրենց պզտիկ կեանքերը տխուր ու լուրջ տուներու մէջ կը ճնշուի մինչեւ որ ինքնարհարար խնդալու կարողութիւնը կը կորսնցնեն :

Տ.թ. ձօնորն կ'ըսէ . «Մարդ իր ժամանակին մէկ մասը խնդալով պէտք է անցնէ» : Երգախառն թատերախաղերը ու զուարթ թատերադրութիւնները գոնէ ժամանակի մը համար մոռցնել կուտան կեանքի լուրջ կողմը ու խնդալ կը սորվեցնեն :

Որքան ուրախութեամբ զուարթ մէկը կը հիւրասիրենք : Անգին շնորհ մ'է խաղաղ , անուշ հոգի մը ունենալ որ կ'ամօքէ : աշխարհիս ցաւերը , երբ մեզ հետ են , քաջութիւն , սյժ կը ներշնչեն մեզ ու տառապանքի ժամուն անոնց կը դիմենք : Բայց ամեն մը կ'արտաշնչեն որ սրտին վէրքերը կը բուժէ :

Ամէնուն հանդէպ բարեացակամ ըլլալ , զէմքին վլ սյ բարօրութեան , սիրոյ արտայայտութիւն մը ունենալ և օգնելու ու ուրախացնելու փափաքը երկրասարդ մարդու մը կամ կնոջ մը համար հարստութիւն մը կ'արժէ : Բարեացակամ ու զուարթ մէկը ներկայացուելու պէտք չունի , ամէն տեղ ան սիրով կընդունուի :

Աշխարհիս մէջ ամէնէն շատ զուարթութեան պէտք ունինք , ամենամեծ հարստութիւնը ուրախ ու բարեացակամ տրամադրութիւնն է : Ասիկա հարստութիւն մըն է որ կ'օրհնէ ոչ միայն տէրը այլ բոլոր անոնք որ իրեն կը մօտենան :

Հարուստ է ան որ հազարակիցութեան մէջ կը մտնէ զուարթութեան միլիոնաւորին հետ , և որքան իր հարստութիւնէն տայ , այնքան կը բազմանայ : Հողին մէջ դրուած հունտին կը նմանի , որքան ցանէ այնքան աւելի կ'ըլլայ հունձքը :

«Մթաղնամ ապակիի մը մէջէն մի' դիտէք կեանքը» :

Թարգմ. Թ. Շ. ՕՐԻՉՆ ՍՈՒԷԹ ՄԱՐՏԵՆ «ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԱՐԾՈՒԼ»

ԵՐԴՈՒՄԸ

(Կցկառար տպագրութիւններ)

Առաւօտ: Սպիտակ տապանաքարերու անվերջ շարքեր կանաչ երկղներով ընդելուզուած: Ներդաշնակ հակասութիւն նոր կեանքի մը արշալոյսին ողջոյնը, հող... նախնիքներու անճիւններուն վրայ որոնք թերեւս կը խայտան ի տես նորաթիթ սերունդին:

Հոս հոն ծաւերու ներքեւ, ցանկապատին քով, սկառւաններ, հաւաքուած խմբակի մը նիզակազրոյն շուրջ որուն վրայի արծիւը կարծես այդ օրունան գաղափարի թռիչքը կը յտկանչէ:

Ձախ ա՛ջ, ձախ. անաւասիկ սուոյզ ու ժպտադէմ սկառւաններու խումբեր որոնք համընթաց քայլերով կուգան բարբոսի իրենց նուիրական դրօշին շուրջ:

Վերջին տատանումներ, խրախուսում և ահա ամէն ոք լուռ է: Փորձառու պեան

Այո՛, Այո՛, ո՛չ, ո՛չ կը գոչեն միաբերան սկառւաններ երգման մասին իրենց խմբապետին ըրած վերջին հարցումներուն պատասխանելով:

— Դէպի Մասիս, կ'ըլլան վերջին խօսքերը համակրելի սկառուտի մը և քաջ յառաջ օ՛ն... խումբերը որ կը մեկնին այս անգամ իրենց հետ տանելով նոր կեանքի մը նոր ուղիներն ընդգրկող հողիններ . . . :


ԵՐՈՒԱՆԴ ԻԻԹԻՃԵԱՆ

Սկառուտական ԲՆՈՒՔԻՆ

ԽՈՐՀՐ ԻԱՒՈՐ ԵՒ ԳԵՂԵՅԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Բերա-Շիրլի մասնաճիւղի Ա. և Զ. խումբի սկառուաններու Ա. կարգի քննութեան նշանակներու յանձնումի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 20 երեկոյեան ժամը 10 ին ընոր Դպրոցի պարտէզին մէջ:

Ներկայ էին Կեդր. Վարչութեան անդամները և ուրիշ հրաւիրեալներ: Պարտէզին



Հ. Մ. Ը. Մ. ի Պանաբրմայի յմասնաճիւղի Վարչութեան անդամները և սկառուանները

է որ կը խօսի ներկաները օրօրելով մերթ իրանութեան և ստէպ գաղափարի որսաններուն մէջ:

Ծափեր, կրկին լուսիւն:
Վտեմ է բոպէն...

Կ'երգնում պատուոյ վրայ... հա իկ հատիկ արտասանող ձայն մը կը խզէ լուսիւնը հրճուանքի սարսուռով մը համակելով ամէնքը:

Չեռքի սեղմում մը խմբապետին և երգուընցող սկառուտին միջեւ վարձատրութիւնը կ'ըլլայ թափուած ջանքերու: Համբոյր մը անրիծ ձակտին նախընտրելի պիտի ըլլար ինծի համար:

խորհրդաւոր մէկ անկիւնը, տաղաւարի մը մէջ, սեղանի մը վրայ զետեղուած էր դաւանանքի նշանատախտակը որուն առջեւ զետեղուած էին աշտանակներ, մէջտեղը դրուած երգումի 3 հատուածները խորհրդանշող 3 մոմով աշտանակ մը:

Մթութեան մէջ շարք եղած սկառուաններ եկան գրաւեցին իրենց տեղերը: Մասնաճիւղի աւագ խմբապետ Պ. Օննիկ Զրէնկեան սկսաւ հարցումներ ուղղել, որուն կ'առաջնորդէր Պ. Արայ Տօմինեան, յետոյ կրկին հարցումներ ուղղուեցաւ իրենց՝ Պ. Մկրտիչ Մալումանի կողմէ որմէ վերջ, իրենց երգումը ըրին և նոյն

միջոցին վառեցան երգման աշտանակի 3 մոմերը, որուն յաջորդեց հեռուեալ խորհրդաւոր արարողութիւնը: Գաւառնանքէն մէյ մէկ հատուած արտասանելով մէյ մէկ մոմ վառեցին բոլոր սկաուտները հոն դրուած աշտանակներէն: Աւագ խմբապետը բաշխեց Ա. կարգի նըշանները: Քննուող սկաուտներուն կողմէ պատրաստուած էր թէյասեղան մը ուր հիւրերը մեծարուեցան թէյով և անուշեղէնով, թէյասեղանը շատ հաճելի աշխարհ:

Սեղանի վրայ խօսեցան Հ. Վ. Հացունի, Պ. Ժիրայր Խորասանճեան, Պ. Յ. Հինգլիան և Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնի վարչութեան կողմէ ՏԹՔ. Մ. Սալբի: Շնորհաւորութիւններ եղան երկու խումբի խմբապետներուն և հանդէսը փակուեցաւ ժամը 12 ին:

կը սածեմ ձեր կազմակերպութեան հանդէպ: Յուզումնալից ուրախութեամբ մը կը զննուիմ այս պահուստ ալ ձեր հով եւ կը լսեմ ձեր ուխտը: Սյս գիւերը եւ այս ծառասանը կը յիշեցնէ ինձ հին Սքեմի հռչակաւոր ասեանը, Սքեմապագոսը, ուր դասեր կը պարուրուէին գիւերուան անբախանց մրութեան մեջ, որպէսզի արդարութիւնը, անջատուած զգայարանաց դիւրախաբ ազդեցութենէն, բացարձակ կերպով լսեցնէ իր անկաւակառ ձայնը: Նոյն ստուերը եւ խորհրդաւոր լռութիւնը կը պատեն հոս ալ ձեր ուխտը, հետի մարդկային ազմուկէ եւ յուզումներէ, անփոփոած դուք ձեր մեջ ու ձեր խղի ասեանին առջեւ, խօսելով ուղղակի ձեր գիտակցութեան ու ձեր առաջնորդաց որ վկայ կանգնած են ձեր հով:



Պէյրուսի Հ. Բ. Ը. Մ. Քելէկեան Օրբանոցի սկաուտները

Ա. կարգի նշաններ ստացան հետեւեալները: Նագաշեան Գարրիէլ, Պէրպէրեան Արտաշէս, Թիւլպէնտճեան Հայկ, Հանրմեան Ներսէս, Արապեան Շահնուր, Քիւչիւքեան Օշին, Գալփեան Վահէ, Գալփեան Արամ, Նըշանեան Ժիրայր, Զարիփեան Միհրան, Տիւրկէրեան Աւետիս, Էքսէրճեան Արամ, Իճատճեան Սիբուս, Վարդանեան Պերճ: Մ. Մ.

Հեռուեալը ամփոփումն է Հ. Վ. Հացունիի խօսք ին:

ՍԻՐԵԼԻ ՊՍՏԱՆԻՆԵՐ

Դուք նւարած պիտի ըլլա՞ք՝ քե՛ս ո՛րքան յոծարութեամբ կը հետեւիմ ձեր զարգացման, եւ կը մասնակցիմ ձեր հանդէսներուն: Եւ այս ձեզ ապացոյց մը թող ըլլայ համակրութեան՝ զոր

Վսեմ է ձեր ուխտը, որ ուրիշ բան չէ՛ բայց երդումն հաւատարմութեան առ Ստուած, առ Հայրենիք եւ առ ընկերութիւնը: Ձեր քաղաքացոյ պարտականութիւնն ամրապնդուած է, զոր ձեր այդ կէս զինուորական նշանագրեսով ու Եւրոպայէն կը հաստատէ՝ քե՛ս ի գործ պիտի դնէ՛ զինուորի անողոք եղապահութեամբ ու զոհողութեան հոգով: Առաքնութեանց ամենէն զեղեցիկը պարտականութեան զգացումը, որով միայն մարդիկ մեծ կ'ըլլան, եւ որով միայն կը փառաւորեն մեծ եկեղեցոյ եւ հայրենեաց նահապետները: Առանց այդ պարտականութեան՝ անոնք չպիտի անմահանային: Ձեմ կասկածի՞ր որ այժմէն կ'ըմբռնէ՛ դուք այդ ըզ-

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍԿԱՌՏԻ ՄԸ ԿԵԱՆՔԷՆ

զացման ազնուական բարձրութիւնը, եւ զայն դրուած էք արդէն ձեր ւրսեռուն մեջ:


Ամեն հասակ եւ ամեն վիճակ իր առանձին պարտականութիւններն ունի. բայց ամենուն դեկաւարը՝ պարտաւանաչութեան միեւնոյն զգացումն է: Երբ դուք ձեր այս պատանեկան հասակին եւ ուսանողական վիճակին մեջ, մեկ կողմ բողած ձեր համազգեսք, հետի ձեր առաջնորդաց ու դաստիարակաց հսկող այժեհէն, փակուած ձեր սենեակի միայնութեան մեջ, գրասեղանի մ'առջեւ կը պատրաստէք ձեր վաղուան դասը, որ ձեր նախնական եւ պարզագոյն պարտականութիւնն է, պիտի յիշե՛ք՝ որ դուք ոչ միայն ձեր ընտանիքը, ոչ միայն ձեր դաստիարակները, այլ բոլոր մարդկութիւնը ակնկառոյց կը սպասէ ձեր այդ պարտականութեան կատարմանը: Որովհետեւ դուք ամբողջ մարդկութեան կը պատկանիք, եւ ձեր այդ փոքրիկ պարտաւանաչութիւնը սահմանուած է կարեւոր բաժին մը բերելու ընկերութեան բարգաւաճման գործին մեջ, ինչպէս ձեր պարտականութիւնն ալ խանգարում մը պիտի բերէ անոր բարեկարգութեան: Որովհետեւ ընկերութիւնը խմբումն է անհատականութեանց, եւ ամեն անհատական գործ իր բաժինն ունի անոր երջանկութեան կամ դժբախտութեան մեջ: Ոչ քեռուսոցը, ոչ քեռ համազգեստին յարգանքը, այլ խիղճն է որ կը բեղադրէ ձեզ հոն, ձեր գրասեղանին առջեւ, եւ այդ խիղճն է որ պիտի վարէ ձեր բոլոր գործերը՝ մինչեւ վերջին օրը ձեր շունչին: Երանի՛ք ձեզ՝ երբ ունկնդիր զնուրի միջ անոր բեղադրութեանց:

Կը հայցեմ ձեր վրայ երկնային օրհնութիւնը, որպէսզի գորանաք ձեր ուխտին պահպանութեան մեջ, եւ հանդիսանաք արժանաւոր յաջորդներ այս պարտաներուն, որոնք պարտի զինուորներ՝ բացին ձեր առջեւ այս գեղեցիկ ասպարէզը, եւ արժովն նուիրուած են ձեր դաստիարակութեան ազնուական գործին:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ



Հ. Մ. Ը. Մ. ի Կեդրոնական վարչութիւնը եւ խմբագրութիւնն իր ցաւակցութիւնը կը յայտնէ Միութեանս հիմնադիր անդամ եւ ընդհ. սկստախմբագրէ Պ. Գրիգոր Յակոբեանի (Բօլոնիա) եւ վարչութեանս անդամ Պ. Լեոն Յակոբեանի իրենց հօր, Տիար Մատուա Յակոբեանի մահուան առթիւ:



Բէյմնա Պէննէթ «Արծիւ» խմբակին պատկանող սկառու մը, որ իր ականջը սառեցուցած է ոչ թէ հաճոյքի համար ձիով պարտուած կամ սահած ժամանակ՝ այլ իր սկառուտի երգուածը յարգելու համար:

Յունվարի ցուրտ դիշեր մը՝ Պէննէթ կը նըշմարէ որ հանրակառքի թիւը փոթած և կախուած է, այնպէս որ եթէ ո և է մէկը անցնի տակէն պիտի շանթահարուի: Պէննէթ տեսնելով անուրի վտանգը, ճիշտ երկու ժամ կը կենայ այդ ցուրտ օդին և անցնող օթոմապիւնները ու կառքերը կ'զգուշացնէ անցնիլ այդ տեղէն, մինչեւ որ կուգան և կը նորոգեն թիւը:

Տեղւոյն թերթերը պատմելով պատահարը կը գրեն թէ Պէննէթ շատ պիտի տառապի իր ականջին համար բայց ինքը շատ գոհ է և միշտ կը ժպտի՝ նոյն իսկ ամենագէշ ցուրտ ժամանակ որովհետեւ կատարեց իր պարտականութիւնը և արժնոյց իր սկառուտի երգուածը:

Կը տեսնէ՞ք սկառուտներ թէ ինչ է ձեր դերը, դուք սկառուտութեան ընթացքներն էք երբ այս տեսակ ազնիւ գործ մը կը կատարէք:

Թարգմ. ԿԱՍՏՐԻՆԷ

Մ Ա Ր Մ Ն Ա Կ Ր Յ Ա Կ Ա Ն

ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՒ ԿԱՐԾԻՔՆԵՐ

1919 թ ամառն էր, Բարիդ: Բանի մը օրէն յուլիս 14 թ անմոռանալի անցքը պիտի գիտէի էթուալին տակէն և արդէն իսկ գինովյնող շունջ մը կար օդին մէջ, մանաւանդ իրիկունները, յաղթութեան մը, մտադրուած նպատատակին հասած ըլլալու գիտակցութեան մը արձագանքը՝ որ ամեն տեղ էր. Սէնին եղերքը, պուլվարներուն վրայ...: Այլուր զուգադիպութիւնով մը այդ օրերն էր որ տեղի կ'ունենար դաշնակից բանակներու ողիմպիականները: Մրցումին չեմ յիշեր քանիեքորդ օրն էր. մոզովուրդին խառնուած՝ քաղաքին մէկ ծայրէն օթօպիւսով Սթաա Բէրշինկ (*) կ'երթայի: Մօտաութը հաս ամերիկացի գլխուորներ նստած էին ու թն ալ լայն ուսերով, լայն ձակաապ և լայն կզակով sammiեներ, ժպտալ շրթունքին և նայուածքը վստահ: Հազիւ թէ կէս մեթր հեռու ըլլալով, ստիպուած մտիկ կ'ընէի խօսակցութեան: Օրուան մրցարդներուն վրայ կըխօսէին:

(*) Stade Pershing— Ամերիկեան բանակին իր ծախքով շինած հոյակապ մրցավայրը, իրենց պետին անուան ձօնուած, գոր վերջը նուիրեցին Գաղիացիներուն, Բարիդի շատ մօտիկ է:

Այդ օրը 100 մեդրի finaleն էր և Paddockի անունը ամենուն բերանն էր : (Այն Paddock-ը վերջին Անվերսի ուղիմպիականին 100 մեդրը շահեցաւ :)

Paddock has gotto win !... ութը հոգիին լեզուին վրայ այս խօսքը ութսուն անգամ չորջեցաւ և այսօր դեռ ականջիս մէջ են այդ վանկերը : Իրաւցընէ , կէս ժամ վերջը , Paddock անաջնութիւնը կը խլէր , իրեն երկրորդ և երրորդ ունենալով ուրիշ երկու ազգակիցներ : Այդ մրցումն ալ ինչպէս բոլոր միւսները , առիթ մը եղած էին որ Ամերիկացիներուն գերակշռութիւնը ի յայտ գայ , միւսներուն վրայ :

Paddock has got to win. Երկու ժպիտի մէջ բուսելիք «պօչ» խօսք մը չէր ասիկայ , ոչ ալ ազգասիրութենէ բղխած անպատասխանատու «Ֆրայ» մը ամբողջ ցեղի մը տարիներու պատմութիւնն է որ կը խտանայ չորս բառի մէջ որ մարդարէութիւնն չէ , գիտակցութիւնն է , վստահութիւնն է : Այդ պարզ նախադասութիւնը զիս հետաքրքրեց , յուզեց և մինչեւ այսօր դեռ խորհիլ կուտայ ինծի անոր իմաստին հողերանական արժէքին վրայ : Յաղթելու , բլբօսներ կոտրելու , ախոյեան մը ըլլալու փափաքը բնական երևույթը ու տարին է ամէն ինքզինքը յարգող մրցորդի : Բայց այն գիտակից վստահութիւնը որ $4 \times 4 = 16$ ի ճշտութեամբ կը պատգամէ : «Այսինչը պիտի յաղթէ , պէտք է յաղթէ» , այդ հաւատքի եզրակացութիւնը ինչ prémissesեր ունի իր ետին : Մարդ պահ մը կը փորձուի ակամայ վերլուծումի . . .

Ակամայ կ'ընեմ որովհետեւ ես ընդհանրապէս կ'ատեմ չոր անսականութիւնը : Միտքը պատկերով կ'ըմբռնէ : Ուղեղը յոգնեցնող վարդապետութիւնները կ'ընան ժամանցը ըլլալ կեանքէնսվազ» անցած վանականներու համար : Բայց մենք որ 18—30 տարու երիտասարդներ ենք և կանչուած վիրաւոր ցեղ մը վերակենդանացնելու և բազմապատկելու , մենք խորչինք մէջը պարապ տեսարանութիւններէ և ուղղակի նախնային հասկնալու ամէնէն կարճ և գործնական միջոցով :

Մենք , ուրիշ շատ մը նպատակներու հետ , մէկ խոչոր նպատակ մըն ալ ունինք . առողջ և ուժով սերունդ մը պատրաստել : Տրամադրելի ատողձ ունինք : Անշուշտ , Ամէն հայ տղայ որ երկու ձեռք և երկու ոտք ունի լիուրի կը բաւէ նպատակին : Փափաք կայ , մտադրութիւն կայ , միջոց կայ , նոյն իսկ յարատեւելու կամք ալ կայ , ընդհանուր կերպով . և միակ բանը որ այս չորսը պիտի ամբողջացնէ , յղկէ և ար-

դինարեբրող կազմի մը մէջ պիտի գնէ , սխիթէմն է : Սխիթէմ մը ունենանք ուրիշ բառով դպրոց մը ունենանք որ խնդիրին ըլլայ այժմէական , ըլլայ սկզբնական արժէքը ամէնագործնական ձեւերով բոլորին մտքին մէջ տեղաւորէ :

Միշտ գիտենք և օրինակենք : Օրինակելը կապկել չէ . կեանքի պայման է : Ամերիկացիները սրօրի և ակնթիւրի մէջ յառաջադէմ են . լաւ , բայց անոնց վրայ հիանալը պարապ բան է երբ հիացումին չյաջորդեք անոնց պէս ընելու տենջանքը և անմիջապէս վերջ՝ փորձը : Ուրիշներ կան որ օրինակելու վրայ են :

Տասնեակ մը տարիներ ասաջ Անկլօ-Սաքսօնները միս մինակ էին կրկէսին մէջ : Այսօր , պատերազմի Բարեւոնին մէջէն Յինլանտիա մը ելաւ որ բովանդակ ուղիմպիական աշխարհին ախոյեան մը ըլլալու կ'սպառնայ : Տեսէք սա Յրանսան որ մինչեւ վերջընթեր ուղիմպիականը իր իսկ բառով piètre figure կ'ընէր , վերջին ուղիմպիականին զմայելի առաջին մը շահեցաւ Guillemot-ով և միւս կողմէ Suzanne Lenglen ի պէս մրցորդուհիով մը ջախջախեց մինչեւ հիմայ Յրանսայի կիներու վրայ սնուցուող ձթուած խճճանքները : Եթէ քիչ մը հետաքրքրուինք չորս կողմերնիս զիտելու , այսպիսի շահեկան օրինակներ չեն պակտիր :

Եւ այդ ազգերը այսօր ամբողջ արթննալու վրայ են : Ինչպէս Ամերիկացիք 30—40 տարիէ ի վեր և չտիւուած ձեւուած ծրագրի մը համաձայն կը կատարեն , նպատակ ունենալով իրենց կարողութիւններուն մակարդակը պահել և բարձրացնել՝ այնպէս ալ Սքանտինաւները և իրենց ետեւէն Լատինները արդէն սկսած են ակնյայտնի լրջութեամբ գործադրել : Գաղղիոյ օրինակը աչքերնուս տակ է : Հեղինակութիւնները գործի վրայ են , մէկ կողմէն ժողովուրդին քնացող խաւերուն թափանցել կուտան առողջապահութեան , սրօրի և ակնթիւրի ըստիպողութիւնը , միւս կողմէն ալ գործնական գեանի վրայ կ'սկսին պատրաստել մրցորդներու խումբեր որոնք վաղուան ուղիմպիական թեկնածուները պիտի ըլլան : Սխիթէմի անհրաժեշտութիւնը զանգակի պէս ամէն կողմ կը հնչեցնեն և իրաւունք ունին : Վստահարար կարդացիք իրենց թերթերուն մէջ Ամերիկացի ախոյեաններու կողմէ գրի առնուած տպաւորութիւնները այս նոր արթնցող գործունէութիւններուն մասին : Կազմակերպութիւն , դաս , յարատեւութիւն , կարգախօսը աս է :

Մենք մեզի դառնալով, ինքզինքնիս թէեւ քիչ մը խակ բայց ոչ այնքան յուսալատական դիրքի մէջ կը գտնենք: Անտուանալի Քրիստեանի օրերէն ի վեր սրօրի սէրը քաջալերական համեմատութիւններ առած է մեր մէջ: Անցնող տարւոյն հայկական ողիմպիականի արդիւնքները հեռուէն հպարտութիւնով լեցուցին մեզի: Բայց դեռ ձիգի պէտք ունինք, երբ մանաւանդ նկատի առնենք որ սրօռի նոր սկսող բոլոր ազգերուն պէս, ահագին դժուարութիւն մըն ալ ունինք դէմերնիս, ժողովուրդին տգիտութիւնը: Տակաւին, դժբախտաբար «Տղաս ճամպազ պիտի ըլլայ» ըսող հայրեր, մայրեր շատ ունինք: «girl guide» երու մասին Պօլսոյ մէջ յարուցուած վիճարանութիւնը բաւական կատակերգական հանգամանքներու մէջ մտաւ: Բայց ես ժողովուրդը չեմ այպաներ, պարզապէս որովհետեւ ժողովուրդը ես եմ, դուն ես, հայրս է և քոյրս: Միւնոյն բանը ասոնք ալ պիտի ըսէին, վստահաբար, եթէ միւս գործին հետ զուգահեռօրէն չի ջանալինք լուսաւորիչի գերը կատարել այդ խաւերուն համար:

Լրագրութիւնը մի՞նչ դեր ունի կատարելիք, բայց տակաւին խնդիրն լրջութիւնը ըմբռնած ըլլալը չէ ցուցուցած: Մեր մէջ, դժբախտութիւն մըն է որ polemique ի սէրը շատ մը կարեւոր գործունէութիւններ ջլատելու պատճառ եղած է:

Կ'ընդունիմ որ սա պահուս վազելէ և ցատկելէ քիչ մը աւելի կշիռ ունեցող հարցեր ունինք. բայց միշտ խորհած եմ որ չորս անգամ լալէ աւելի օգտակար է մէկ անգամ լալ և միւս երեք անգամը յատկացնել սփոփեցուցիչ մը գտնելու:

Երբ խօսքը մկանի վրայ է, կրնանք ապահով կերպով յայտարարել թէ մեր ցեղը որ և է ուրիշ ցեղէ պակաս օժտուած չէ, մեզի համար ամէնէն անհրաժեշտը մարզանքին մեր այսօրւան լուրջ զբաղումներուն քով դնելը և մեր ընկերային programme ին վրայ պատուոյ տեղը անցնելն է:

Գիտակցութիւնով փարփլ, օրինակելով սկըսիլ, և գրեթէ կուրօրէն յարատեւել տրդիւնարեր աշխատանքի այս տարուան մէջ մեզի ինկած բաժինը աս է: Մեր ամէն մէկ արդիւնքը, որքան որ ալ փոքր ըլլայ, միւսներուն տուածին քառասպատիկը պիտի արժէ քանի որ, սրտ է և արլերիզմէ առաջ, ախոսս, ազգին հիմերը փրկելու և պահելու պօռացող պարտքեր ունինք: Բայց հոգ չէ. կարեւորը սգին է և որակը:

Միսթէմով ուրեմն: Դարերէ ի վեր չարչարուող տքնող սերունդներու պիտի շարունակենք: Մեր տակաւին երիտասարդ ուսերուն վրայ atavisme ր մինչեւ մահ աշխատելու, գրեթէ աչքերը գոց աշխատելու ստիպողութիւն մը դրեր է, որ բնազդի կը նմանի: Այդ աշխատութիւնը ուղիղ գիծերէ քալեցնենք և արդիւնարեբութեան maximum ր տանք:

He has got to win!

Ու այս անգամ ակնարկուած հերոսը կրնայ վահրամ մը կամ Հրաչեայ ըլլալ:

Դահիրէ

ԱՐՄԷՆ ԳԱԼՏԱԵԱՆ


ՄԱՐԶԱՆՔԸ ԵՒ ԻՐ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Շատ կարեւոր պարագայ մըն է գլտնալ թէ մարզանքը ինչ մեծ դեր ունի մարդկային կիանքին մէջ, մանաւանդ մեզ սկսուածներուս համար: Բայց դժբախտաբար մեր ծնողքները, և մեր ուսուցիչներէն ոմանք իսկ այնքան կարեւորութիւն չեն տուած և չեն հետաքրքրուած այս այնքան օգտակար հարցով, որուն նպատակն է մարմինը զարգացնել զօրացնել և բարոյականի տէր և ուղղադատ մարդը պատրաստել: Ուրեմն մարմնակրթանքը ազդակ մըն է անհատին բարոյականը կարելի եղած կատարելութեան հասցնելու: Անշուշտ բաւական դժուար պիտի ըլլայ մարզանքի զազափօր չունեցող մարդերուն մէջ ներմուծել թէ մարզանքին ուժ տալով ենթական լարտիազաց մ'ընել չէ՛ ինչ որ կը կարծուի շատերէ. այլ միայն միջոցն է մարմինը անթերի, գոհացուցիչ միջոցներով կազդուրել որուն պէտք ունինք: Պէտք է որ ամէն մարդ մարզանք ընէ իրենց կազմական կարողութեան չափ՝ կանոնաւոր ու տոկուն մարմին մը պատրաստելու, որ գինքը շատ մը տկարութիւններէն և նոյն իսկ վտանգներէն ալ կտ պիտի կեցնէ, եթէ մարզանքի կարեւորութիւն չի տար, հիւանդութեամբ մը չուտով պիտի ընկճուի և նոյն իսկ բարոյապէս ալ տրկար պիտի մնայ կեանքի պայքարներուն առջեւ:

Մարդ» պէտք է որ երկու բանի ուժ տայ Ա. մտքի զարգացման Բ. Մարմնական զարգացման, սակայն երկրորդը անհրաժեշտ է միշտ ամէն ատեն և ամէն տեղ:

Մ. ՔԵՕՏԿԵՐԵԱՆ

Վենետիկեան Մխիթարեան Վարժարան




Սկսուտական եւ մտքական կիսամետայ օրկան Ն. Մ. Ը. Մ. ի Յոնիական շրջանին Բաժնեգին 100 զրշ. տարեկան: Հասցէ «Badrasd»Greek P. O, Box 34 Smyrne.

Կ Ռ Փ Ա Մ Ա Ր Տ

ՀԱՅԿ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՅԱՂՔԱԿԱՆ

3 Յունիս 1922

Մինչև հիմա բազմաթիւ և հեռաքրական կոփամարտներու ներկայ եղած էինք, բայց մեզի տրուած չէր սառսուռները զգալ, յեղակարծ դարձածքները ապրիլ մեծ կռիւի մը որ սո-



Հ Ա Յ Կ Ա Ս Ա Տ Ո Ւ Ր Ե Ա Ն

Կոփամարտի Ախոյեան Եգիպտոսի,

Սուրիոյ և Պաղեստինի,

Եգիպտահայ մարզական կեանքի պատիւը:

Վորարար կը մղուի Ֆրանսայի, Անգլիոյ և Ամերիկայի բիկերուն վրայ:

Շարաթ օրուան կոփամարտը Եգիպտոսի սվորի տարեգրութեանց մէջ նոր էջ մը կը բանայ: Կոփամարտիկներու անունները, հսկայ յայտարարութիւնները, և մամուլի մէջ մղուած բուռն բանավեճերը, բաւական էին իրուն և ալեկոծ բազմութիւն մը քաշելու Մինչմա նա-

սիօնալը՝ անձկութեամբ ակնատես ըլլալու մղուելիք կոփամարտին:

Պ. Հայկ Ասատուրեան, եգիպտահայ ախոյեանը, որ նոյն ատեն ախոյեանն է 15 միլիոն եգիպտացիներու, պէտք չունինք ներկայացնել մեր ընթերցողներուն: Իր զնդերներուն գեղեցիկ կազմուածքը, իր զարմանալի ձկունութիւնը, իր զօրաւոր բուռնքը (punch) թոյլատրած են իրեն մինչև հիմայ յաղթելու իր բոլոր հակաակորդները և պահելու հպարտութեամբ, Եգիպտոսի կոփամարտի ախոյեանի տիտղոսը:

Կասթան Փօթիէ, հակաակորդը, անձանթ մը չէ: Դեռ Եգիպոս չեկած իր համբաւը հասած էր հոս արդէն: Ան հիւսիսային Ֆրանսայի և Քանադայի կոփամարտի ախոյեան ժօրժ Գարբանթիէի աշակերտ, Փարիզի ու այժմ Գահիրէի պօսի ուսուցիչ, ցարդ 120 յաղթանակներ ստրած է, որոնց 45 ը ճօք աւարով, ահա քանի մը բառերով այն վասնգաւոր մրցորդը որուն հետ պիտի չափուէր մեր հայրենակիցը: Եւ եթէ աւելցնենք որ Փօթիէ 10 քիլօ աւելի կը կշռէ քան Ասատուրեան և նոյն ատեն հասակի և ֆիզիքական բիրտ ուժի առաւելութիւններ ունի այս վերջնոյն վրայ, չնորհիւ իր գիտութեան և այն հազուադիւր յատկութեանց զոր բնութիւնը չնորհած է իրեն:

Առաջին չորս ռաուլներու ընթացքին, Փօթիէ յարձակեցաւ Հայկի վրայ, զայն ճօք աւար ընելու մտադրութեամբ, բայց այս վերջինը, ներկաներուն հիացում պատճառելու ատիճան ձկունութեամբ մը, չէզոքացուց իր հակաակորդին բոլոր յարձակումները և անոր կռուելակերպը ուսումնասիրեց:

Հինգերորդ և եօթներորդ ռաուլներուն Հայկ յարձակեցաւ Քարիէնթիէի աշակերտին վրայ և անոր ստամոքսին ու դէմքին յաջող հարուածներ տուաւ, որոնց հետեւանքով Փօթիէի ձախ աչքն ու ականջը վնասուեցան ծանրապէս:

Աւթերորդ, իններորդ և տասներորդ ռաուլները աւելի ևս յագնեցուցին Փօթիէն որ զուր տեղ փորձեց վճռական հարուած մը տալ Հայկին: Մեր ախոյեանը ժպտաւ ընդունեց այդ հարուածները և սկսաւ շարժուել իր հակառակորդը որ շնչասպառ եղած յաղթութեան ամէն յոյս կորսնցուցած կը թուէր այլեւս:

Վերջին երկու ռաուլներու ընթացքին գիրկընխառն կատաղի կռիւ մը եղաւ, ուր իրաւարարը հարկադրուեցաւ միջամտել և բաժնել մրցորդները: Փօթիէ այլեւս ուժաթափ

եղած էր, մինչդեռ Հայկ աւելի քան երբէք զուարթ ու կայտառ երեւոյթ մը ունէր:

Յաղթական հռչակուեցաւ Ասատուրեանը որտառնդոսա և երկարատեւ ծափերու և աղաղակներու մէջ Հարիւրաւոր հանդիսատեսներ, փութացին խոնուիլ ռիսկի վրայ և Հայկը ուսամբարձ պտուտցուցին բեմին շուրջ, իսկ խանդավառուած բազմութիւն մը բաղկացած ընդհանրապէս եղիպտացիներէ, հայերէ, յոյներէ և սուրիացիներէ, իրեն կը սպասէին Սինեմայի արտաքին գրան առջեւ, զայն յաղթականօրէն մինչեւ իր աունը առաջնորդելու համար: Հայկ ստիպուեցաւ թատրոնին ետեւի դռնէն, առանց տեսնուելու դուրս ելլել, խոյս տալու համար համեստօրէն իր բարեկամներուն և կողմնակիցներուն սեղմումներէն:

Գահիրե «Յուսաբեր»

ԲՕՊԷՐԹ ԳՈՒԼՃԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՅՈՒՍՆԵՐԸ

3 Յունիս 1922

Շարժմ օր, ցորեկէն վերջ ժամը 3 ին, Բ. Գօլէճի ժարգավայրին մէջ տեղի ունեցան տարեկան ընդհ. մրցումները: Այս տարի թէեւ ներկաներուն թիւը քիչ էր, սակայն մրցումները շատ հետաքրքրական էին: (*)

Ստորեւ կ'ուսանք արդիւնքը.—

100 մետր վազք.— Ա. Շէքիպ էթիզէմ, Բ. Բարաքալիս, Գ. Հ. Պահչէճեան, նախորդ մրցանիչը մէկ երկվայրկեանով կոտրած:

Ժամանակ՝ 11 3/5 երկվայր.

200 մետր վազք.— Ա. Բարաքալիս, Բ. Մուհարրէմ, Գ. Բօմաթօֆ. մէկ չորս հինգերորդ երկվայրկեանով նախորդ մրցանիչը կոտրած:

Ժամանակ՝ 24 4/5 երկվայր.

400 մետր վազք.— Ա. Շէքիպ էթիզէմ, Բ. Էմիրզեան, Գ. Սէլեան:

Ժամանակ՝ 58 երկվայր.

800 մետր վազք.— Ա. Հաճիմիթցօս, Բ. Եօնաս, Գ. Ե. Սելեան: 3 երկվայր. երեք հինգերորդ երկվայրկեանով նախորդ մրցանիչը կոտրած:

Ժամանակ՝ 2 վայր. 12 2/5 երկվ:

1500 մետր վազք.— Ա. Եօնաս, Բ. Աթա-նասեատիս, Գ. Նաւասարդեան: 7 երկվ. նախորդ մրցանիչը կոտրած:

Ժամանակ՝ 4 վայրկ. 35 երկվ.

(*) Յաջորդով կուտանք, Գօլէճի Մարգական կեանքի վրայ գրութիւն մը, վարագի կողմէ գրուած:

Ն Շ Ս. Ն Ա. Ե Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

Հանդիսով կը տեղեկանանք նշանակաւոր քիւնը Հ. Մ. Բ. Մ. Ի Յանիական օրջանի (Իզմիրի) սկաուտ խմբապետ՝

Պ. ՄԿՐՏԻՉ ԵԱՆՇԳԵԱՆԻ

ՕՐ. ՄՍՈՒ ՄԱԶՈՒԼԵԱՆԻ նեւ.

Մեր ճորհաւորութիւնը եւ բարեմաղբութիւնը մեր սիրելի ընկերոջ:

3000 մետր քաղել.— Ա. Սարալամայիս, Բ. Տիմիթրօֆ, Գ. Տէյրմէնճեան.

Ժամանակ՝ 17 վայրկ. 36 երկվ.:

110 մետր ցանկաւաւ.— Ա. Գօմաթօֆ, Բ. Բէթսօրուլօս, Գ. Շէքիպ:

Ժամանակ՝ 19 3/5 երկվայր.:

Գրօսաւաւ.— Ա. 1923 ի գասարան, Բ. 1922 և Գ. 1924, 3 երկվայրկեանով նախորդ մրցանիչը կոտրած:

Ժամանակ՝ 2 վայրկ. 23 երկվայ.

Բարձրութիւն ցատկել.— Ա. Բարաքալիս, Բ. Անտօնի, Գ. Գալֆայեան:

Բարձրութիւն՝ 1.625 մետր:

Գուկ նետել.— Ա. Ֆրանկագիս, Բ. Բօլիս-թէրքօֆ, Գ. Հ. Պահչէճեան:

Հեռաւորութիւն՝ 10,90 մետր:

Չողով ցատկել.— Ա. Հ. Պահչէճեան, Բ. Զէրվուտաքիս, Գ. Նաւասարդեան:

Բարձրութիւն՝ 2.75 մետր:

Սկաւառակ.— Ա. Ֆրանկագիս, Բ. Բօլիս-թէրքօֆ, Գ. Բարուհանի:

Հեռաւորութիւն՝ 33.16 մետր:

Երեք քայլ ոսում.— Ա. Հ. Գալֆաեան, Բ. Գօլիսթէրքօֆ, Գ. Չաղլասեան:

Հեռաւորութիւն՝ 12.75 մետր:

Մէկ քայլ ոսում.— Ա. Յ. Չաղլասեան (ազադայ խոստացող նորեկ մարզիկ մը), Բ. Հ. Գալֆաեան Գ. Անտօնի:

Հեռաւորութիւն՝ 6.15 մետր:

Նիզակ նետել.— Ա. Ֆրանկագիս, Բ. Թօտօրոս Գ. Ալի Նաճի:

Հեռաւորութիւն՝ 40.33 մետր:

Cross Country վազք.— Ա. Աթանասիատէս, Բ. Հաճիմիթսօս, Գ. Նաւասարդեան, Գ. Եօնաս:

Junier կարգը առաւելագոյն յաղթանակները տարած ըլլալով, ախոյեանի բաժակ մը ստացաւ:

4 ՅՈՒՆԻՍ 1922 ՊԷՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈԳԵԿԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ Հ Ա Ն Դ Է Ս Ն Ե Ր Ը

ՄՐՅՈՒՄՆԵՐ ԱՏՐԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

- Ստորեւ կու տանք միայն մարմնակրթակա- նին արդիւնքը.—
- 50 մեքր վազք.— Ա. Համադասպ Բիրանեան, Բ. Յ. Եղիաեան, Գ. Գ. Նարինեան, Ժամանակ՝ 6 1/8 երկվայր.
- 800 մեքր վազք.— Ա. Յարութիւն Մարտիրոսեան, Բ. Պոյաճեան, Գ. Թէրզեան, Ժամանակ՝ 2 վայրկ: 29 1/8 երկվ.
- 400 մեքր վազք.— Ա. Համադասպ Բիրանեան, Բ. Յ. Եղիաեան, Գ. Մ. Մէլեան, Նախորդ մրցանիչը՝ 3/8 ով կտարած, Ժամանակ՝ 62 4/5 երկվայրկեան:
- 1500 մեքր վազք.— Ա. Արսէնեան, Բ. Թէրզեան, Գ. Փլօշեան, Նախորդ մրցանիչը 7 ու կէս երկվայրկեանով կտարած, Ժամանակ՝ 5 վայրկ. 8.5 երկվայր.
- Ուժ առած բարձր. ցատկել.— Ա. Յ. Մարտիրոսեան Բ. Աղասեան, Գ. Բիրանեան, Բարձրութիւն՝ 1.50 մեթր:
- Մեկ քայլ.— Ա. Յ. Մարտիրոսեան, Բ. Աղասեան, Գ. Ս. Աղասեան, Հեռաւորութիւն՝ 5.26 մեթր:
- Չողով ցատկել.— Ա. Գ. Բիւրքճեան, Բ. Ա. Պէրպէրեան, Գ. Յ. Բիրանեան, Բարձրութիւն՝ 2.67 մեթր:
- Սկաւառակ նետել.— Ա. Նարինեան, Բ. Գոյթուճեան, Գ. Գալֆահեան, Հեռաւորութիւն՝ 25.72 մեթր:
- Գունդ նետել.— Ա. Տ. Վարդանեան, Բ. Մ. Գալֆահեան, Գ. Ս. Փափազեան, Հեռաւորութիւն՝ 8.32 մեթր:
- Երեք քայլ ցատկել.— Ա. Յ. Մարտիրոսեան, Բ. Է. Աղասեան, Գ. Հ. Բիրանեան, Հեռաւորութիւն 11.80 մեթր:
- Կեցած նեռաւորութիւն ցատկել.— Ա. Գ. Բիւրքճեան, Բ. Լ. Աղասեան, Գ. Մ. Գալֆահեան, Հեռաւորութիւն՝ 2.72 մեթր:
- Պարանաձուրթիւն.— Երեց, Աւագ կարգերը շահեցան առաջնութիւնը, և ի վարձ ստացան կողով մը ելակ:
- Բրօսարճաւ.— Առաջնութիւնը շահեցան նոյն միացեալ կարգերը:
- Օրուան տխրեան հանդիսացաւ Պ. Յ. Մարտիրոսեան և ստացաւ Յաղթութեան Վահան մը:

*. Ֆուանսայի մէջ Ռուզուէլթ անունը կրող աթլէթիկ մրցումները, շնորհիւ օտար մարզիկներու մասնակցութեան, լաւ արդիւնքներ տուին: 100 մեթր վազքի մէջ 11 1/8 ով առաջին ելաւ Լօրէն Ֆուանսային՝ մէկ կուրծք ետ ձգելով անգլիացի էտուրաուր և հակառակ որ այս վերջինը աւելի լաւ վազող մըն էր, ճամբայ հանողին անվարժ ըլլալուն պատճառով շատ գէշ մեկնած են մրցորդները: Երբ էտուրաուրն իր գաղափարը հարցուցած են ծիծաղելով ըսած է, լաւ արագութիւն վազողներ ունիք սակայն դժբախտարար ճամբայ հանողներու պակասը զգալի է:

800 մեթր վազքը շահեցաւ Ֆուանսայի 400 մեթր վազքի շամբոն Ֆէրի որ առաջին անգամ էր որ կը վազէր այս հեռաւորութիւնը և սակայն մեծ յարմարութիւն ցոյց տուաւ 1.57 4/5 էն կտրելով:

200 մեթրի մէջ հակառակ Մուսլոնի առաջ ճամբայ ելլելուն անգլիացի էտուրաուր առաջին կ'ելլէ 22' էն կտրելով հեռաւորութիւնը և 1 կուրծք ետ ձգելով Մուսլոնը:

Ամէնէն կարեւոր մրցումը որուն կը մասնակցէին Նիւուսի, միջազգային 10,000 ի շամբոնը Գօլէհմայնէն և Լուզմէն միջազգայինին մտաթօնի 1 ին և 2 բղբ, Վանտէն Պուէօլ Պելճիոյ շամբոնը, դիւրին յաղթանակ մը եղաւ Նիւրմիի համար. առաջին շրջանին Գօլէհմայնէն զլուխ անցաւ քիչ վերջ Նիւրմի էր որ կ'առաջնորդէր խումբը աւելի արագ գնացքով մը, 1000 մեթրէն վերջ Նիւրմի աւելի կարագացնէ, իր ետին՝ կ'սկսի խումբը նօսրանալ միայն Վանտէն Պուէօլ անոր կը հետեւի սակայն Նիւրմի կ'ուղէ անկէց ալ բաժնուելու մինակ վազել, սակայն Պելճիոյցին շրջան մը ևս կը հետեւի անոր, 1500 մեթրին ան կ'ստիպուել ձգել Նիւրմին որ մինակը ճամբորդէ, և շրջան մը Նիւրմիին և Գօլէհմայնէն մինչեւ կը վազէն 2400 մեթրին Նիւրմի 60 մեթր ասարեքութիւն ունի Վանտէն Պուէօլէն՝ որուն Գօլէհմայնէն կը ձօտենայ, կ'անցնի՝ սակայն վերջը Պելճիոյցին Բ. բղբութեան տեղը կը խլէ Ֆինլանտացիէն, Նիւրմի 4827 մեթր 14' 42" 1/8 էն առած է: Երկաթ և սկաւառակ նետելու մէջ Բօնօլլու առաջին ելած է առաջինը 13,97 նետելու խսկ երկրորդը 38,32:

*. Ֆուաէլ Ամերիկացի նոր վազող մը մրցումն մը մէջ աշխարհի 100 եարտայի ուէքօնին

հաւասարած է 9³/₅էն կտրելով ինչ որ ըրած են Տըն Բէլլի, Տոիւ և Բասուք:

* * Ամերիկայի միջփոխային մրցումներուն արդիւնքները: 100 կարտա Բօլլու 9' 9/10: 220 կարտա Բօլլու 21 9/10: 440 կարտա Գօհրան 49 7/10: 880 կարտա Հէֆօրին 1 58 1/10: 1 մղոն Շեղս 4 20 4/10: 2 մղոն Ռաթպըն 9 32 1/10: 120 կարտա արգելք Պաուսըն 15 4/10: 220 կարտա արգելք Պաուքինս 24 2/10: Բարձրութիւն Մընֆի և Օսպէն 1.89 1/2 Միւլլու 1,88. երեք հոգի 1,85 և 5 հոգի 1,80 ցատկած են: Երկայնութիւն Լէժանտէն 7,40, Միւլլու 7,22, Ճօնի 7,18 ցատկած են: Յող Նօրլու և Լատուսքի 3,81, Տէվին, Գօլլինս, Հօկան, Մէնփըլ, Ռօճրու 3,75: Նիզակ Հօֆմէն 61,65: Սկաւառակ լիւս 43,92, Մարկօլն 41,60, Կոսս 40,22: Երկաթ Մէնչըրթ 13,58, Պոսնտըն 13,42, Ուիթթիլըն 13,26:

* * Անգլիոյ Եամբիոնուքեան աղիւնները. Ինչպէս ըսած էինք այս տարի անգլիոյ շամբիոնութեան մրցումները լաւ արդիւնքներ տրւին ի բաց առեալ մի քանիէն, Անգլիացի Էուլընս որ եւրոպայի ամէնէն լաւ արագութիւն վազողներէն է 100, 200 և 400ի մէջ առաջին ելաւ հակառակ տկար ըլլալուն:

* * Նիւրմի 4 մղոնի մէջ առանց ճիգ վատնելու առաջին ելաւ, մրցման սկիզբէն գլուխ անցաւ կէս ճամբան արդէն 80 մետր տարբերութիւն ունէր առաջինէն՝ վերջաւորութեան Պլէուիթ շատ աշխատեցու անոր հասնելու ստիպան Նիւրմի ջուանը կտրած պահուն ան տակաւին 55 մետր տեղ ունէր վազելու: Ահաւասիկ արդիւնքները: 100 կարտա՝ Էտուընտս 10'': 220 կարտա՝ Էտուընտս 22'': 442 կարտա՝ Էտուընտս 50 2/5: 440 կարտա արգելք՝ Բէնթօնիկս (Անգլ.) 59'': 120 կարտա արգելք՝ Կապի (Անգլ.) 15 2/5: Կէս մղոն՝ Մութէն 1'55 2/5: Մէկ մղոն՝ Մաք ֆէ (4' 27' 2/5): 4 մղոն՝ նիւրմի (Ֆիլ.) 19'52 1/5: 2 մղոն քալել՝ Ֆոնիօրիօ (Իտալ.) 14'30'': Երկաթ նետել՝ Բօնօլլա (Ֆիլ.) 14,53: Սկաւառակ՝ Նիթթիմա (Ֆիլ.) 41,65: Մուրճ նետել՝ Լինասո (Շուէտ) 52,45: Նիզակ՝ Ճօհանսըն (Ֆիլ.) 61,07: Երկայնութիւն՝ Հօֆ (Նորվէկ.) 7,10: Բարձրութիւն՝ Լիւտէն (Ֆրանս.) 1,80: Երեք քայլ թիւլոս (Ֆիլ.) 14,28, Յող՝ Կէսարազ (Չուիք.) 3,60:

* * Ֆիլատէլֆիի մէջ եղած մրցումները հետեւեալ արդիւնքները տուած են: 100 կարտա՝ Հէյս 9 2/10: 200 կաէտա՝ Բօլլու 21 8/10: Ուոլթըն՝ 440 կարտան 48' և 880 կարտան

1'55'' էն: Մէկ մղոն՝ Բէթէուսըն 4'22'': 2 մղոն Մաթպըն 9'27'': 110 արգելք Նօլէն 15'': Երկայնութիւն՝ Օղպօն 7,13: Բարձրութիւն՝ Օղպօն և Մընֆի 1,95- Յող՝ Լատուսքի 3,81: Նիզակ Էնճիլըն 60,02: Սկաւառակ՝ Լիէպ 45,01: Երկաթ Բէնչըն 13,29:

ՍՏԱՑԱՆՔ

Ցաւակ, Տիկին Փայլածու Ս. Գարտանիանի: Ցաւի տարիներու կեանքէն՝ յուզիչ վէպ. 300 էջով հատոր մը, Մարուր տպագրութիւնով, Գին 1 տոլար:

Նոր կայծ, Գրական, գիտական, հասարակական ժողովածու Բ. պրակ. Գին 10 դրուշ. հասցէ՝ Պապրալի թիւ 73:

Ազատ կիպրահայ, Խմորատիպ շաբաթաթերթ, հասցէ՝ Նիկոսիա (Կիպրոս):

Հայ պատանի, պատկերազարդ շաբաթաթերթ, հատոր 5 դրշ. տարեկան 250 դրշ. հասցէ՝ Bible House, Stamboul Constantinople.

Գարման, Բժշկա-Առողջապահական ամսաթերթ. բաժնեգին 150 դրշ. հատոր 12.50 դրշ. հասցէ՝ Grand rue de Pera 103-113:

Արեգ, Գրական, գիտական ամսագիր, վեցամսեայ բաժանորդագինն է՝ 20 ֆրանկ: Ամերիկայի համար 2 տոլար: Բաժանորդագինը ուղարկել ֆրանկի կամ տոլարի չէրով: Առանձին թիւը կ'արժէ 4 ֆրանկ. Ամերիկայի համար 50 սենթ: Գիմել՝ Redaction «Areg» S. Hakobian Vienne (Autriche), VII. Mechitaristengasse 4. «Արեգ» ի կեդրոնատեղին Կ. Պոլիսի համար Պալենց գրատունն է: Այն բաժանորդները, որոնք մտադիր չեն «Արեգ» ի նոր վեցամսեայի թիւերը ստանալ կը խնդրուի երկտողով հաղորդել խմբագրութեան:

Կոչնակ Հայաստանի շաբաթաթերթ բաժնեգին 100 դրշ. ոսկեդրամ. հասցէ՝ 287 Fourth ave. New-York Ծիւածան Յ. Գազանճիեանի. Գ. գիրք ընթերցարան Մայրենի լեզուի: Բ. տպագրութիւն. հրատարակութիւն Պալենց գրատան: Գին 30 դրշ.

Լիակատար Գրացանկ, Պալենց գրատան:

ԿԸ ԾԱԽՈՒԻ

Սկսուտական զմեկներ հատոր 50 դրշ.
» » ջրամաններ » 60 »
» » պայուսակներ զանազան գիւներով:

Հ. Մ. Ը. Մ. արծաթ նշանակ լամբակի գին 25 դրշ.:

Սկսուտական փող (Clairon)
Ֆուլթպօլի վարտիք

Ֆոնիթ-ՊՈԼԻ ԳԻՐՔԸ
Բոլորովին զեղջուած գիներով: Գին 20 դրուշ. մեծաքանակ գնողին 100 ին 20 զեղջ: Գիմել Հ. Մ. Ը. Մ ի կեդրոնը:



Հեղինակ՝ EMILIO SALGARI

Խալ. Թրգով. Հ. ՅԱՆՈՐԱՍ ԻՍՍՊՐԵՂԻՆԱՆ

ԺԵ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Մորկան ու Պարթըն բրիչները ձեռք առին, ու փշրեցին տախտակը որ արդէն փտատած էր և որ երկու մեզր երկայնութիւն, ու կէս մեզր լայնք ունէր: Շուտով երեւան եկաւ՝ փայլուն առարկաներով փաթեթաւած երկայն սեւ կոյտ մը: Սըր ձօն մօտեցուց կանթեղը ու նայեցաւ:

- Դիա՞կ մը, բացազանջեց:
- Դիա՞կ մը, հո՞ւ, գոչեց Մորկան: Մօտ ատեններս թաղուած:
- Դարեր առաջ, այնպէս որ մտխա զարծեր է:
- Հնդի՞կ մըն է:
- Ո՞չ... Ո՞չ:
- Ի՞նչ կայ:
- Բայց ասիկայ Ձինացի մըն է:
- Ձինացի՞ մը գոչեց մերենաւարը:
- Ահա ասիկ հո՞ւ թաղիբէ բարձր ներբանով կոչիկներ, հոգմանար մը, մետաքսէ երկայն վերարկու մը...
- Սակայն պոչը չեմ տեսներ:
- Ի՞նչ կարեւորութիւն ունի:
- Ձինացիներուն գանկը քերծուած է տէր: Ես անտեցմէ շատ տեսած եմ Քալիֆոռնիոյ և Սան ֆրանչիսկոյի մէջ և ամէնքն ալ պոչեր ունէին:
- Մանչուրիացիներու արշաւանքէն առաջ, Ձինացիք պոչ չէին կրեր. յաղթողներէն բանազաւեցան ամբուրի:
- Դուք կը հաւատա՞ք որ այս չինացին դարերէ ի վեր թաղուած ըլլալ, հարցուց Մորկան: Քրիստոսփոր Փոլմպոս Ամերիկան գտաւ 1492 ին, իսկ մանչուրիացիներու արշաւանքը՝ շատ ու շատ դարեր առաջ եղաւ:

Սըր ձօն փոխանակ պատասխանելու, ձեռքը առաւ մտխան չընապատոյ այդ փայլուն առարկաներէն հաս մը: Արծաթէ դրամ մըն էր, կոչա կերպով շինուած, մէջ տեղէն ծակ, ու քանի մը կրամ ծանրութեամբ: Չայն լամբարին մտաեցուց և ուշադրութեամբ զննեց:

- Ձինարէն կը խօսի՞ք, հարցուց Մորկան:
- Քիչ մը, ըսաւ Սըր ձօն: Ա՛... . . .
- Ի՞նչ կայ:
- Բարեկամներ, մենք մեծ խնդիր մը կը լուծենք, որ տարիներէ ի վեր երկու աշխարհներու գիտնականները կը յուզէր:
- Ո՞րն է, հարցուցին Պարթըն և Մորկան:
- Դիա՞կ, որո՞նք եղան Ամերիկայի առաջին բնակիչները:
- Կարմրամորթները, պատասխանեց Պարթըն առանց վարանելու:
- Ուսկի՞նչ կու գային այդ կարմրամորթները:
- Ատիկայ գիտնայը գիւրբն չէ:
- Եւ սակայն, նայեցէք այս մտխային, այս մարդը Ամերիկայի նախկին բնակիչներէն մէկն է:
- Ի՞նչ, գոչեց Մորկան: Ձինացիները... . . .
- Ամերիկայի նախկին բնակիչները եղան, ըսաւ Սըր ձօն:
- Բայց մի՞ ըսաւ ատիկայ քեզի:
- Այս դրամը Ու-Ուանկի (1) անունը կը կրէ. և Ու-Ուանկ Քրիստոսէ 1100 տարի առաջ թաղաւորեց:

(1) Ու-Ուանկ Ձէու հարստութեան պետն էր Շանկ հարստութեան յաջորդող որ սկսաւ թաղաւորել Քրիստոսէ 1122 տարի առաջ:

— Ազատն՝ զ էք որ էէք սխալիք, տէր

Ձեմ սխալիքս կը կրկնեմ որ Ձինացիք եզան առաջին անգամ Ամերիկայ ելլողները ու բնակողները (2)

— Բայց, հաշիւի առաջ՝ էք Ամերիկայի և Ձինաստանի միջև եղած հեռաւորութիւնը

— Դիտե՛ աշխարհագրութեան քարտէսը Մորկան, պիտի տեսնես որ Ձինաստանի ու ձարոնի մէջ կարճ միջոց մը կայ Այդ հաշիւ եղած է որ երկու օրուան մէջ՝ մակոյցով կարելի է Ամերիկայ անցնել:

— Կերեցէ՛ք տէր, ես կը տարակուսմ:

— Ինչո՞ւ: Ձե՞ս տեսներ ձարոնի և Ամերիկայի եզերքին վրայ տարածուող բազմաթիւ կղզիները:

Մորկան ուժով ցնցուեցաւ եղած գիտազութեանէն զոր շատ իրաւացի կը գտնէր:

— Իրաւունք ունիք ձարոնի և Ամերիկայի միջև կը տարածուի կղզիներու ցանց մը: Ասկայն երեք հազար տարի առաջ՝ նաւակներ անշուշտ ծագուն գիմադրելու շտի կատարեալ չէին և ոչ ալ շինացիք պիտի գիտնային իրենց արեւելեան կողմը ցամաք երկիրի մը գոյութիւնը:

— Ես չեմ ըսեր թէ՛ Ձինացիք գէպի Արեւելք ցամաք երկիր մը գոյութիւնը գիտնալով ճամբայ ելած ըլլան թերեւս առանց իրենց ուղեւարուն հանքը լուծած ըլլան:

— Կա՞յ Ձինաստանէն կամ ձարոնէն գէպի Ամերիկայ դացող հասանք մը:

— Ձեմ վարանիք զայն հաստատելու, Մորկան Ալաուտեան կղզիները օրոնք կը տարածուին Պէնթրոնի նեղուցին առջև, ծառ չեն բուսցներ, և սակայն բնակիչները նաւակներ չինելու համար փայտ կը գործածեն իրենց ո՞վ կը հայթայթէ այս փայտը:

— Ձեմ գիտեր:

— Ետիք կը բերէ այդ կղզիներուն՝ բուններ և մասնաւորապէս քաղիքներին (laurus camphora): Դիտե՞ս ուր կ'աճին ստանք:

— Տեղեկութիւն չունիմ:

— Ձինաստանի և ձարոնի հարաւային գաւառներու մէջ կ'աճին Որով ըսել է թէ, հոսանքը՝ նոյնիսկ տկար ալ ըլլայ և տարուան դանդաղան եղանակներուն տիրող հովերը գէպի Ալաուտեան կղզիները կամ գէպի Ամերիկայ կը քշեն շինական կամ հարսնական ծովակերպներէն արմատախիլ այդ ծառերը: Ուրիշ օրինակ մը քեզի. ձարոնական նաւ մը հոսանքէ քշուելով Քալիֆորնիայ եզերքը իջաւ. ու-

րիշ մը զնաց Օրէկոնի եզերքը խրեցաւ: Աւրեմն զարմանալու բան չկայ թէ՛ երեք հազար տարի առաջ Ձինացիք լատտափայտերու վրայ նստած Ամերիկայ քշուած ըլլան: Քեզ ի՞նչ պէտք կը թուի:

— Ձիմայ համոզուեցայ, տէր, որ Ձինացիք են Ամերիկայի առաջին բնակիչները: Ասկայն կը հաւատամք թէ իրենց հայրենակիցները եղած այդ մեծ զիւտէն տեղեկութիւն ունեցած ըլլան:

— Տարակոյս չկայ, և քեզի յատուկ ու անվիճելի օրինակ մը տամ: Հին վաւերագրիչներ որ ներկայիս լոյս տեսած են, կը հաստատեն թէ մեր հինգերորդ դարուն մէջ, պուտոտայական քարոզիչներ համարողութեանց ձեռնարկեցին գէպի Արեւելք՝ Հարուէի երկիրը: որ ըստ գիտնականներու, Գոլոմպիա և Քիօ-տէլ-ճիլա գետերու (Միացեալ Նահանգներու արեւմտակողմի) միջև գտնուած երկիրն է: Եթէ տեղեկութիւն չունենային, ճամբայ չէին ելլեր:

— Իրաւացի է, ըսաւ Մորկան:

— Եւ ի՞նչու համար այս մարդը հրարութիւն մէջ թաղած են, հարցուց Պարթըն:

— Ձեմ գիտեր, սակայն զարմանալու բան չէ: Թերեւս այս մոմիան մեծ ցեղապետ մըն էր: Եւ լուսնակներ մեր արշաւանքը, հոս այլեւս ընկելք գործ չունինք:

Երեք սաստաղներ, նորէն ճամբայ ելած միշտ գէպ արեւելք երթալով, մերթ բարձրանալով ու մերթ իջնելով, և երբեմն հեղեղատներ անցնելով: Սըր ձօն ստէպ կանգ կ'առնէր գետինը զննելու համար հանքածուխի հետք մը գտնելու յուսով: Ասկայն մզոն մը քալեց առանց արդիւնքի:

— Ետ դառնանք, ըսաւ ընկերներուն: Դայի նման անօթեցեր եմ և կերակուրը անշուշտ պատրաստ պիտի ըլլայ:

— Հոս նորէն պիտի դառնամք, հարցուց Մորկան:

— Վաղը պաշար կ'առնենք և աւելի ներսերը կը թափանցենք, կը յուսամ ամուխ գտնել:

Եկած ճամբով ետ դարձան ու շոգեմակոյցին հասան որ միւլեոյն տեղը ուր որ ձգած էին կը տատանուէր:

— Սեղանը պատրաստ է, պարոններ, գոչեց Ս'Քոնոր ընկերներուն լապտերները տեսնելով:

Սըր ձօն, խառնածինը և մերենովարը առին թիերը և շոգեմակոյցը գէպի կղզեակը քշեցին:

Քիչ յետոյ կը լափէին իրլանտացիին պատրաստած կերակուրը, որ սառչելու շատ համեղ եղած էր:

ԺԶ. ԱՄՈՒԻԻ ՀԱՆՔ ՄԸ ՈՐ Կ'ԱՅՐԻ

Յաջորդ օրը, 13 Դեկտեմբեր, հսկայ կոնսաճեւէն մտնող առաջին լուսաշողին, չորս բախտախնդիրները թողուցին կղզեակը՝ նախորդ օրը սկսուած արշաւանքը շարունակելու համար:

Օղոյ ջերմութիւնը գետ բարձր էր, և հարաւակողմի մեծ գետնուղիէն գետ սեւ ու զարչահոտ գանդաղ ծախ մը կ'ելէր գէպի հրարութիւն բերանը: Անշուշտ շատ հեռուները գետին վրայ հրդեհը կը շարունակէր:

Լճին եզերքը, խուզարկուները նաւակը քաշեցին՝ պզտիկ ու գեղեցիկ ձոցի մը մէջ որ երկու

(2) Նման գիւտ մըն ալ եղաւ 1882 ին հոկտեմբերի մէջ եւ ուր մեծ յուզում հանեց Ամերիկայի մէջ: Այն ատեն Նիւ-Եորքի մէջ լոյս տեսնող՝ Progresso Italo-Americano (Իտալ-Ամերիկեան յառաջդիմութիւն) թերթը՝ կը յիշատակէր թէ՛ Քասսիի (Քոլումպիա) ամխանանգերուն մէջ, վեց սոր խորութեան մէջ, ակամաստներ գտած են չինական քանի մը դրամներ, ոմանք երկաթի թելով մը իրարու միացած էին: Լոյս տեսածնուն պէս, հագիւ թէ կը զպչին թելը փոշի կը գառնայ, սակայն դրամները անաղարտ կը մնան, որոնց արժանագրութիւնները ցոյց կուտային անոնց երեք հազար տարի առաջ կտրուած ըլլալը: Որով վեպիէր երկրաչափը լիովին իրաւունք ունէր:

բարձր ժայռերէ ձեւացած էր: Լամբարները վա-
ռեցին, ու հետեւինն առին բրիչներ, սան մը, ու
բաւական քանակութեամբ ուտելիք, ու ելան ա-
փուներին վրայ որ շատ զառիվեր էր:

— Ս'ը կ'երթանք, հարցուց Պարթըն:

— Միշտ գէտի արեւելք, ըսաւ երկրաչափը
կողմնացոյցին նայելով զոր երբէք ձեռքէ չէր թո-
ղուր:

— Ա՞յս ուղղութեան վրայ կը յուսաք ամուսի
գտնել:

— Այո՛, և կ'ապահովցնեմ զքեզ որ պիտի գըտ-
նենք: Երթանք, բարեկամներ:

ձամբան շատ գէշ էր: Ասդին անդին կային ըն-
դարձակ տեղեր հրարխային ժայթքած նիւթերու,
աստղատակները ստիպուած էին անագին շրջաններ
ընել անցնելու համար. կային կրանիզէ անագին եր-
կաթաքարէ ժայռեր, լափայի անթիւ անհամար կոյ-
տեր, ոմանք կասկարմիր և ոմանք գեղեցիկ զեզ-
նադոյն որանք կը ցոլացնէին լապտերներուն լոյսը:
Ասկէ դուրս, շատ անգամ ոտքերնուն անջեւ կը
բացուէին խորունկ ձեղքեր, որոնց խորը գրեթէ
միշտ կը լսուէր խուլ մոնչիւնը կատաղի հեղեղնե-
րու, որ անտարակոյս լճին մէջ կը թափէին:

Սետոյ կէս ժամ մը մերթ ելլելով իջնելով, ու
մերթ ժայռերուն շուրջը գառնալով երբ անկարելի
կ'ըլլար, և մերթ պատուած քները ցատկելով աս-
պատակները կը գտնուէին միին ու շատ լայն ստո-
րերկիայ սրահի մը անջեւ, որ գէտի հարաւարե-
ւելք կ'երթար: Սեպացեալ սրտերը երկաթաքար
էին. և կամարներէն՝ ակնախտիկ զաւաղանի բիւ-
րեղներ կը կարսուէին, որոնք ազամանդի պէս կը
չողչողային լամբարներու լոյսէն:

— Ս'ը կ'երթանք, հարցուց Պարթըն:

— Միշտ յառաջ, ըսաւ երկրաչափը:

— Ս'ը պիտի տանի զմեզ այս գետնուղին:

— Չեմ գիտեր, բայց անշուշտ տեղ մը գուր
պիտի ելլենք: Օ՛... Ի՞նչ բան է այս հոտը:

— Պարծես թէ ամուսի կը վառի, ըսաւ Մորկան:

— Եւ ս'ի կ'ուզես որ ամուսի վառէ, հարցուց
Օ՛Քոնոր. մեքենափար դուն հոտառութիւն չունիս:

— Ես չեմ սխալիր, իրանաւայի՛: Ես շատ շատ
տարբեր ամուսիներու մէջ անցուցեք եմ:

— Մորկան իրաւունք ունի, ըսաւ երկրաչափը:
Ս'... ս'...

Լամբարը բարձրացուց ու վեր նայեցաւ: Սեւ
ծուսի մը հանդարտ կը սահէր գետնաբահին կա-
մարին ներքեւ:

— Մ'... իս կայ, գոչեց:

— Մ'... իս, ծո՛ւսի, սրտացին բնկերները ապշած:

— Ասկի՞ց կու գայ այս ծուսի, հարցուցին
երկրաչափին:

— Արդեօք, մէկը նստած բուսի՞նկ կ'եթէ, ըսաւ
Պարթըն խնդալով:

— Յառաջ, ըսաւ Սըր ձօն: Եւստով պիտի հա-
կնանք այս ծուսին ուսկից զալը...

— Հանքածուսի է, ըսաւ Մորկան:

Երազարայլ յառաջացան միին կամարներուն
ներքեւ: Ամէնքն ալ հետաքրքիր էին՝ այդ ծուսին
ուսկից զալը գիտնալու, ստուգիւ տարօրինակ բան,
հանքածուսի հոտ մը կ'արձակէր:

Գետնաբահը շուտով լայնցաւ ու բաւական
բարձրացաւ: Սըր ձօն՝ երեք չորս անգամ բազաները
վեր բարձրացուց, ու զարմացմամբ տեսաւ որ ծու-
սիը աւելի սեւ կը շարունակէր երկնալ, կամարնե-
րուն տակէն:

Հարեւր քայլ ևս երթալէն յետոյ, Սըր ձօն
յանկարձ կեցաւ ուշադիր գետինը դննելով:

— Ի՞նչ տեսար, ըսին միաձայն Պարթըն և Օ՛Քո-
նոր:

— Հոս նայեցէք:

Սեւ գետնին վրայ կը ծեւնոյին՝ ամենագեղեցիկ
սպիտակ բոքրասներ ու գրեթէ ամէնքն ալ բարձրաձեւ:
Անոնք ծծուածքի, շղթեղի և անուշադրի հետքեր էին:

— Ի՞նչ կը նշանակէ ասիկայ, հարցուց Պարթըն,
որ երթալով կը վրդովէր:

— Գաղտնիքի բանալին ձեռքերնիս է, ըսաւ
երկրաչափը: Այո՛, չեմ սխալիր, այս ծուսիը և այս
տաքութիւնը՝ այրող ամուսի հանքէ մ'առաջ կու-
գայ:

— Այրող ամբահանք մը... գոչեցին Պարթըն
և ընկերները:

— Այո՛, բարեկամներս, ու չեմ սխալիր: Քայլեր:

Աւելի երաք սյուան քայլել ամենամեծ հետաքր-
քութեամբ մղուած: Եւ որչափ յառաջանային, ա՛յն-
քան ծուսիը աւելի կը թանձրանար և տաքութիւնը
կ'ահէր և որ գրեթէ անտանելի կը դառնար:

Տաս զայրեկան յետոյ՝ խոզարկուները գետնու-
ղիէն սեւ զալաագետնի մը վրայ ելան, որուն վերեւ
կը տեսնուէր ծուսի ամպերուն տատանուիլը: Ամէն
կողմ կը տեսնուին ծծուածքի անուշադրի և ուրիշ արդ-
նախան աղերու հետքեր:

— Չարմանալի՛ բան, ս'ը ենք, հարցուց Պար-
թըն:

— Ամբահանքի վրայ որ կ'այրի, ըսաւ Սըր ձօն:

— Սակայն, բսկէ է թէ մէկը եկած է հոս, ա-
ւելցուց Պարթըն:

— Ի՞նչ բանէ կը հետեւցնէք ասիկայ:

— Չարմանք, հանքածուսիը ինքերեքն փունկած
չէ անշուշտ:

— Թերեւս հազար տարիներէ՛ ի վեր... անաւա-
սիկ բան մը որուն երբէք պիտի չհաստատայի, պարուն:

— Պէտք ես հաստատել, բարեկամ: Հազար տարի
կ'ընեմ շատոնցմէ այրած ըլլալը իմացնելու համար:
Թերեւս երկու հազար տարիէ ի վէր:

— Կարելի՞ բան է որ ամբահանք մը հազարա-
ւոր տարիներ այրի, ըսաւ Մորկան:

(Շարունակելի)

Վարիչ-խմբագիր ԿԱՐՕ Պ. ՌԻՇՍՎԵԼԱՆ	Արտոճար ԳԱՌԼՕ ԵԱՅԻՆԵԱՆ	Պատասխանատու-Տնօրէն ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ	Տպագրութիւն Կ.ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐԳԻ
------------------------------------	---------------------------	--	--------------------------------